

բաժակ մի ջուր ցուրտ յանուն միայն աշակերտի, ոչ կորուսեց զվարձս իւր. եւ զամենայն հրամայեալսն ի փրկական սուրբ Աւետարանէն: Լուարուք կատարօղք հրամանաց մերոց, եւ հնազանդօղքն օրհնեալ եղիցին ի յԱստուած պետականէն, եւ յամենայն սրբոց եւ ի դասուց իմանալի սպասաւորաց: Ամէն:

Այս է պատուէր եւ հրաման ամենայն հաւատացեալ Ուղղափառ հայկազուն սեռի եւ գիր վկայական Արքեպիսկոպոսութեան ի ձեռն հոգեւոր որդւոյ մերոյ Տէր Մեսրօպ վարդապետի եւ Արքեպիսկոպոսի որ եւ կոչի Քեհեայ արապօղլի որդի. Ամէն:

Սակայն եթէ Սոյ կաթողիկոսաց գաւազանագրքերուն նայինք, (զոր օրինակ, Ս. Փրկչի Հիւանդանոցի Օրացոյց, 1909, էջ 284) 1742ին կը նշանակուի Միքայէլ Աջապահեան 1737—1758. իսկ Յովհաննէս անուամբ կան երկու Հաճնցիներ 1705—1721 եւ Յովհաննէս Հաճնցի Տէր-Ադամ 1727—1734, որոնցմէ եւ ոչ մէկը կը յարմարի մեր կոնդակին, բայց միայն առաջին Հաճնցւոյն կաթողիկոսութեան սկզբնաւորութեան 1705 թուականն. սակայն ասիկայ, ինչպէս կը նշանակուի, ստոյգ մեռած է 1721ին ի Գեկտի, եւ տապանագիրը ցայսօր կը կենայ Սոյ կաթողիկոսարանի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցին (Սիսուան 217, «Բիւզանդիոն», 1899, թ. 970): Յաջորդներ կը նշանակուին

Գրիգոր Կեսարացի, «Ուղուրլու»,	1721—1727
Յովհաննէս Հաճնցի Տէր-Ադամ,	1727—1734
Ղուկաս Աջապահեանց,	1734—1737
Միքայէլ Աջապահեանց,	1737—1758